# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 205/14 «05 11 2019թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵԳՐԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում 31.12.2019 թ. - 06.01.2020 թ. ընկած ժամանակահատվածում, ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.

ա) մինչև 3 տարեկան երեխաների համար անվճար,

բ) 3-12 տարեկան երեխաների համար՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ,

գ) 12 տարին լրացած անձանց համար՝ 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը (6 գիշեր), երեք անգամյա սնունդը և ամանորյա գալա-ընթրիքը:

2. Սահմանել, որ

ա) Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում ուղեգրերի ամրագրումը մեկնարկելու է 2019 թ. նոյեմբերի 5-ին և շարունակվելու է մինչև առկա տեղերի համալրումը,

բ) տեղերի ամրագրման առաջնահերթությունը տրվելու է ավելի վաղ վճարում կատարած ԵՊՀ հիմնական աշխատողներին,

գ) յուրաքանչյուր աշխատողի (նրա ընտանիքին) հատկացվում է ոչ ավելի, քան 5 տեղ,

դ) ուղեգրերի արժեքը վճարվում է ԵՊՀ բանկային հաշվեհամարին՝ Արարատբանկ ԲԲԸ, h/h 1510001995480500 (AMD),

ե) ուղեգրի արժեքը վճարած անձանց համար, բազայում սենյակների նախնական ամրագրումն իրականացնում է ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավարը (Ա. Մալխասյան):

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ